


ԱԶՍՏՈՒԹԻՒՆԸ չափու
համար չէ որ կը հրատա-
րակուի :

ԱԶՍՏՈՒԹԻՒՆԸ տունէ
տուն ու քաղաքէ քա-
ղաք շրջելով դրամ կամ
բաժանորդ չի մուրար :

ՀԱՅ Ժողովրդի յառաջ-
դիմութիւնը մեր շահն
է, իսկ Հայոց ազատու-
թիւնը ԱԶՍՏՈՒԹԻՒՆԻ
նպատակն է . . . :



Circulation
larger than
any other
Armenian paper
in the U. S.

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Դ. ՏԱՐԻ ԹԻՒՆ 59 ՆԻՒ ԵՈՐԹ, 1892, ՅՈՒՆԻՍ 30 ԳԻՆ ՀԻՆԳ ՍԷՆԹ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՅՈՒՆԻՍ 16Ի ՆԻՍՏԸ**

Այս նիստ տեղի ունեցաւ ի
ներկայութեան քսանի չափ ան-
դամոց և բաղնաթիւ այցելուաց :
Տեղի. Գարբիէլեան՝ ի չզույց ատե-
նապետի, Ժողովոյ բացումն ծանոց
և առաջարկեց որ նոյն Ժողովոյ
համար ատենապետ մը կարգեն :
Տեղի. Յ. Արշակունի միաձայնու-
թեամբ ատենապետ հռչակեցաւ .
որ ստանձնելով պաշտօնն չնորհա-
կալութիւն յայտնեց անդամոց
իրենց համակրանաց համար, և
միանգամայն յայտարարեց թէ՛
համակրանքէ աւելի բան մը կարող
զինքը կը կոչէր այդ երեկոյ վա-
րել Ժողովի գործերն-երկրագոյնն
լինելով ներկայից : Թէ՛ և կային ար-
դարեւ այդ մարմնոյ մէջ աւելի
տարբեր անդամներ, բայց այդ
երեկոյ ներկայ չէին գտնուած :

Տ. Այվաթեան առժամանակ-
եայ ատենապետի անունակեցաւ,
և կարգադրեց նիստի ատե-
նապետութիւնն : Այս առթիւ Գար-
բիէլեան դիմելով տեղի թէ՛ Գոր-
ծադիր Ժողովն դեռ յարմար դա-
տած չէր զՊ. Չանգալեան, թէ՛ և
մերժած ալ չէր զայն, ուստի ար-
ձանագրութեան այդ մասն որ հաս-
տատական էր, կուգէր որ փոխ-
ուի : Ատենապետն, իբր նախորդ
նիստի ատենապետութիւնն խմբա-
գրող հրաժարեալ ատենապետի,
խնդրեց Գարբիէլեանէ որ յայտա-
րարէր թէ՛ ո՞րն էր ուրեմն Գոր-
ծադիր Ժողովոյ երկրորդ անձին
անունը : Գարբիէլեան չուարեցաւ .
միտքը չէր . գրականներն խուզա-
րել սկսեց, զի մի գուցէ այդ
երկրորդ յարմար դատուած պա-
րոն իր այնքան խորունկ զբաղա-
նին մէջ կորուսած ըլլար : Գործ .
Ժողովոյ միւս անդամը միմեանց
նայիլ սկսան, բայց այդ երկրորդ
անունն չէր յիշուէր զարմանալի
մոռացկոտութեամբ :

Ատենապետն, մտածելու բա-
ական ատեն տալէ վերջ, յայտա-
րարեց թէ՛ Գործ . Ժողովն եթէ
իր անդամներն բերէր զբաղա-
րակալի, և յետ ընթեռնելոյ՝ զայն
յանձնէր դիւանին, որպէս սովո-
րութիւն է ամէն տեղ, այժմ և
միշտ դժուարութիւնը չէին ծա-
գիր, և այս պարագային մէջ
մասնաւոր : Դիւանը Գործադիր
Ժողովոյն յղած էր երեք ա-
նուններ ի զննութիւն և ի տեղե-
կագրութիւն, և Տ. Չանգալեանի
անունն մին էր ի նոցանէ, և օրի-
նօք այդ անուններէ դուրս ո՛ր և
է անուն Գործադիր Ժողովն չի կը-
նար բերել ի վաւերացումն : Գործ .
Ժողովոյ պետն կընդունի թէ՛ եր-
կու անձ յարմար դատուած են,
բայց չընդունիր որ այդ երկու
անձանց մին եղած լինի Տ. Չան-
գալեան, և կը մոռնայ պահ մը թէ
ուրիշ անուն ալ չկրնար բերել և

երկրորդ անձի մասին ալ յարմար
դատած չէ ըսած էր : Բաց ատի
ատենագրութիւնը ևս կը վկայեն
թէ՛ երկրորդ ընտրելին է Տ. Չան-
գալեան. Ատենապետն որ այն-
քան վիճարկութիւններն ճշգ-
րիտ ու մանրամասն զրի առնե-
լու և աւանդ ո՛ր և է դիտողու-
թեան Ժողովոյն վաւերացման
արժանացնելու կարող լինել յե-
տոյ, ևնչպէս կրնար ըլլալ որ
այդ անունը Պետին բերէին սխա-
լած : Ըլլայ ու սխալ արձանագ-
րած . և որքէն խնդրոյ նիւթ լի-
նելու ուրիշ անուն չկար մէջտեղ :
Գարբիէլեան որ յաջողած էր ան-
դամոց ուստի անտարբերութեան
և ուստի ալ կուրսութեան շնոր-
հիւ ցարդ կամայական գործերը
նկ, մինչև իսկ օրէնքը ստանալու
իսկ, բայց վերջերս օրէնքը երե-
սին զարեւել սկսուելէ ատի՛ նե-
ղը մտած է խեղճը : Ինքը գի-
տէր թէ՛ այն օրը յարմար դա-
տած անձինքն էին Տիարը Յ. Հա-
մալեան և Չանգալեան, և թէ՛ և
սրտանց չէր ըրած այս յայտարա-
րութիւնը, այլ սակայն քանի՛ ա-
ւելի իրեն կուսակից կարծուած-
ներու ընտրելութիւնն յաջողը-
նելու համար, այդ երկու անուն-
ները յարմար դատած էր, բայց
չեղաւ այնպէս : Այս մարդը կը
կարծէ թէ՛ ինքը չա՛տ վարպե-
տութի մէ և թէ՛ դիմացը գտն-
ուողներն չանխելներ են և չեն
տեսնար իր ընկերներն և չեն
տեսնար խօսակցներն, և եթէ
պատահի որ՝ իր օրերով ու գի-
շերներով լարած թակարթին
գաղտնիքն մէկը գիտնայ կանու-
թէն, կատարութիւնն եղունգնե-
րը կ'ուտէ . և տեսնելով որ իր ա-
պօրինուոր կերպի առաջարկե-
լիները ջուրը ինկան, ինքն ալ բը-
նապէս զղջաց միւս երկուքը յար-
մար դատած լինելուն համար և
ջանաց որ սուտ մը նետէ, որ-
պէս զի գտնէ մէկ հատը ջնջիլ յա-
ջողի . սակայն Ժողովը մերժեց այդ
դիտողութիւնն և վաւերացուց
ամրողութեամբ գտնեալագրու-
թիւնն : Վաւերացուց նախ՝ զՏիար
Համալեան և հռչակեց անդամ
Հայկական Միութեան, որ ջեր-
մապէս ծախարարուեցաւ : Ժո-
ղովը նկատելով որ ինքն էր օրէ-
նդիր բարձրագոյն մարմինն և
գործ . Ժողովոյ տեղեկագրերն մի-
այն կը լսէր անոնց նկատմամբ տա-
լիք օրոշումները իրեն վերապա-
հելով, նմանապէս անդամը ըն-
տրելութեան նկատմամբ Գործ .
Ժողովոյ յարմար կամ անյարմար
դատածն իր քուէով կրնար ճշ-
գել, մերժել կամ ընդունիլ, ըստ
քան և մէկերորդ վաւերացուց
զՏիար Չանգալեանն . նամանա-
ւանդ որ ներկայից կողմանէ զինք
ճանաչողներն ինքն նպատակաւ
վկայութիւններ ալ տուին յատե-
նի Ժողովոյ . սակայն գաղտնի յան-

ցանք մը ունի եղեր այս պարոնն,
զոր Գործ . Ժողովոյ պետն միայն
գիտնալու առաւելութիւնն ու-
նեցեր է, և այն ալ իրեն կուսա-
կից չըլլալն եղած է : Այս պա-
հու Գարբիէլ մեկնեցաւ Ժողովն :
Ժողովն նոյնպէս յետ ազատ վիճա-
րանութեան զոր ատենապետն
արտօնեց, վաւերացուց երկրորդ
օրինաւորապէս առաջարկեալ
անձն որ նոյնպէս դժբաղխու-
թիւնն ունէր Գործ . Ժողովոյ պե-
տին մանաւանդ կուսակից չըլլա-
լու : Ժողովն լսեց Գործադիր
ներկայ անդամներն այս անձի նը-
կատմամբ . որք չուէին նկատի
աւելու զօրաւոր փաստ մը, այլ
ենթադրութիւններ էին . իսկ միւս
կողմանէ շատեր պարզեցին եղած
ենթադրութիւններն և ապացու-
ցին թէ՛ օգտակար անձ մ'էր նա,
և արդէն ուրիշ անգամ ալ անգամ
ընտրուած էր Ժողովոյ, բայց յե-
տոյ հեռացած էր այլ և այլ պատ-
ճառներով :

Անգամը գրաւոր նոր ընտ-
րելիներ առաջարկեցին և յանձ-
նեցին դիւանին ի զննութիւն և
ի տեղեկութիւն . եղան միմեան
որք նկատելով Գործ . Ժողովոյ
զուտ կամայական ընթացքն նոր
ընտրելիներու նկատմամբ, առա-
ջարկեցին զայդ մասնախմբի մը
յանձնել, սակայն նախագահ օ-
րինաց պահպանումն յիշեցուց և
ըստովորութեան դարձեալ Գործ .
Ժողովոյ յղուելն օրինական լի-
նիլն յայտարարեց . Ժողովն հա-
մաձայնեցաւ : Նոր խնդիրներու
ու առաջարկներու կարգին դի-
ւանը ընթերցաւ հետեւեալն .

Մեծապատիւ Ատենապետ
Հայկական Միութեան,
Նկատելով որ՝ Հայկական Մի-
ութեան գոյութեան օրէնք ըսկա-
եալ, նիստ չէ՛ անցած որ Ժողո-
վոյ խաղաղ գործն վերջութեամբ
չըլլայ Տեղի. Գարբիէլեանի մէկ
խնդիրով և բռնած այլ և այլ
ընթացքներով, և տեղի տուած
չըլլայ մինչև իսկ կուրսներու, որ-
պէս ատենագրութիւնը կը վկա-
յին :

Նկատելով որ՝ Հայկական Մի-
ութեան նպատակին մէջ չ'կայ
բնա՛ւին յեղափոխութիւն, մինչ
Տեղի. Գարբիէլեան իւր թերթով
և հրապարակախօսութիւններով
յեղափոխութիւն կը քարոզէ Օս-
մանեան կառավարութեան դէմ,
և այնպէսով կը փնտռէ հոս՝ և ի
Հայրենիս Միութեան շատ մը
անդամոց և նոցա ընտանեացն
Հաշտեալ և լինչև իսկ կեանքին,
նա մանաւանդ գտնուելով Գործ .
Ժողովոյ գլուխ, և արդէն չ'ըլլայ
նաև միևնոյն պատճառներով այ-
լոց ալ Միութեանս անդամակցե-
լուն .

Նկատելով որ՝ Միութեան
վերջնէր նստին մէջ իւր սովո-
րական կամայական ընթացքով
անպատուած է Ժողովոյ դիւանն
և նորա հրաժարման պատճառ է
եղած .

Ստորագրեալ անդամքս Հայ-

կական Միութեան Տեղի. Գարբի-
էլեանի այս Միութեանն արտա-
սուած կը պահանջեն անմիջապէս
ըստ 43րդ յօդուածի կանոնադրի
Նիւ Եորք, (Ստորագրութիւնը)
Յուլիս 12

Գործադիր Ժողովոյ անդամ-
ներէն Պ. Իշխանեան ջանաց ցոյց
տալ թէ՛ իշխանեան Գարբիէլեան
խնդիրն չ'ընտրուած Գարբիէլեանի
արտաքսումն պահանջել արդար
չէր ըլլար . բայց ամբաստանագրի
մէջ նկատի առնուած կէտերուն
վրայ չ'կրցաւ ոչինչ ըսել : Այլ
պնդեցին թէ՛ այս ուրիշ խնդիր-
ներու հետ բնաւին առնուած ին-
չունի և ոչինչ կարգելու չ'կրն-
եան . Գարբիէլեան խնդիրն քննե-
լու տալ իրաւունք ու՛մ որ անի է :
Վերջապէս որոշուեցաւ ըստ
օրինի խնդիրն յանձնախմբի մը
յղել, և որովհետեւ արդէն կար
յանձնախմբ մը, ուստի որոշ-
ուեցաւ նոյն յանձնախմբին յղել
այս ամբաստանութիւնն ալ ի
քննութիւն : Ստորջ էր որ մաս-
նաւոր քննութեան պէտք չ'կար,
քանզի այդ ամբաստանագրոյն առա-
ջին մասը ատենագրութիւններով
ու ամէնօրեայ իրողութիւններով
ապացուցուած է, իսկ երկրորդ
կէտի մասին բնաւ վարանելու տե-
ղի չ'կար, քանի որ իր թերթը մի
կենդանի վկայ է իր դէմ . երկրորդ
կէտն ալ զիւս նախորդ նիստէն
մնացած թարմ իրողութիւն մ'է :
Սակայն Ժողովն խոհական համա-
րեց ամէն առաւելութիւն տալ
ամբաստանելոյն որ անիրաւ մի
զրկանք կրած չ'ի համարէ զինքն :
Ժողովոյ անդամք՝ մեծաւ մասամբ
պահանջեցին սակայն որ մինչ ցեղ-
րակացութիւն յանձնախմբին, ամ-
բաստանեալն պաշտօնանկ ըլլայ :
Առաջարկութիւնն երկրորդ ուսած
և երրորդ ուսած լինելով, օրինաց
ալ բնաւին հակառակ չ'ըլլանելով,
Ժողովը մեծամասնութեամբ որո-
շեց որ Գարբիէլեան, իբր կրկին
ամբաստանեալ մի պաշտօնեայ,
դադրի իր պաշտօնէն, և բնապէս
այս որոշմամբ Գործադիր Ժողովն
ալ ջուրը կ'ընար իր պետին հետ :

Անկեալ Գործ . Ժողովոյ պե-
տին խնդիրուն Տեղի. Իշխանեան
գամբանական խօսեցաւ և հան-
գուցելոյն բարեմասնութիւններն
վեր առնելու չափ փաստեր չ'ու-
նենալով ի ձեռն, կրցաւ միայն
ըսել զողջուն ծայրիկ թէ՛ Հայ-
կական Միութեան ի մօտոյ պիտի
կըլլու էր Հայոց Հայրենասիրական
Ընկերութիւնէն քանի որ Միութե-
անս մէջ այս նոր տարրը ներ-
մուծանուելով սկսած էր թէ՛ այդ
նոր ընտրելիներէն չ' . Ընկերու-
թեան ալ բարեկամ մարդիկ կա-
յին և կը մարդարէանար մինչև ան-
գամ թէ՛ ինչպէս որ խորմեանն,
որ գրեթէ աքսորեալ լինուած, ալ
այսօր կ'աթողիկոս Ամենայն Հո-
յոց էր քուէարկուած, նոյնպէս

ալ Միութեանս զղջալով որ մը՝ զ-
Գարբիէլեան պիտի փնտռէր . Ժո-
ղովը ծիծաղեցաւ այս խօսակցու-
թեան վրայ բնապէս, և ի գուր իսկ
չ'արժեցաւ կողորդելուսն այն
արտասուաց առջև զորս խեղճ տը-
ղան Հարաշար պարտուած կըթա-
փէր, առանց իսկ հասկնալու թէ՛
ինչ էր խօսածն : Ինչ զարմանալի
բաղդատութիւն : Խորմեան աղ-
գէն չ'անպատուեցաւ երբէք .
թուրք կառավարութիւնն կասկա-
ծելով անոր ունեցած Հայրենասի-
րական գաղափարներն հեռացուց
զինքն Պոլսէ . որոյ պատճառ Գար-
բիէլեանի նման թուրք երբէք,
երբէք վախ չ'ընէին պոռացող
Հայրենասէրներն : Եղան ինքէ՛ ձո-
ւումարանութիւն չ'ըլլար աշխար-
հիս վրայ, ինչ պիտի ընէին այս
ամէն առթիւ օգտուել ջանացող
խաչագոյններն : Երբ մարդ թուր
ըսուած բանը միտք բերէ պահ մը
և այդ օրհնեալ գէնքն ալ դժբաղ-
դութիւն ունենայ Գարբիէլեանի
մը ձեռք տեսնել, որ ամէն տեսա-
կէտով համեմատութեան օրէնքէն
ու չ'ազնաւորուէ . բայց ատենով
թուրին գործը Գարբիէլեանի հո-
գուցն հետ որ ճանձի չափ չէ,
թուրը միշտ յաղթանակած պի-
տի լինի : Բայց հարկ չէ թուր գոր-
ծածել գիտցող լինիլ և այդ մեծ
հոգին ունենալ . բառերը կը բաւեն
ծափահարուելու . և նա՛ Մեծ
ՄԱՐԴ եղած կը կարծէ զինքը այդ
ծափահարութեանց մէջ, փոյթ
իսկ չէ բնաւ թէ՛ ազգը, եկեղեցին
յուսմանքս կը փնտռուին, Հարաշար
կը տուէն, և խորմեանի նման ե-
կեղեցականներ կը կասկածուին և
կ'աքսորուին :

Ժամանակէ մը իվեր է որ
Գործ . Ժողովոյ անկեալ պետն
զինքը լաւ Հանաչողներն համո-
զելու գէնք մ'էր ըրած ճիշդ
այդ խօսքեր թէ՛ Հ. Հ. Միութե-
անն ջանք կընէ իրանեւ զՀայ-
կական Միութեանն, և թէ՛ անգամ
ընտրելու չէ՛ ա՛յն ամեն անոնք
որք՝ Գարբիէլեանի փտահութիւնն
չ'են վայելել, և այսպէս բաւական
յաջողած էր, ի չնորսն անտար-
բերութեան շատերու, իր այդ
քաղաքականութիւնն ի գործ դը-
նել :

Հայկական Միութեան առա-
ջարկեալ նոր ընտրելիք գրեթէ
մեծաւ մասամբ Միութեանս ար-
դէն ուրիշ անգամ անդամ ընտ-
րուած անձեր են, և ճանձնարա-
նով իրեն լղրճուի գործերէն ա-
ւեր քաղեր են և չեն ուզած լի-
նիլ տեղ մը ուր գտնուի Գարբի-
էլեան, որ ա՛յնքան տաղալացուցիչ
և գունդիկ անձնաւորութիւն մ'է
եղած, և որոյ գործերը խօսքե-
րուն չ'ափուելու արժանի չ'են
բնա՛ւ :

Առժամեայ նոր կազմիչի (ըստ
Գարբիէլեանի պետ) ընտրու-
ածն (Մնացեալն տես երես Գ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԻՍՍԱՄՍԵԱՅ
ԱԶԳԱՅԻՆ ԻՒՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ.

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
ԱՄԷՆ ԱՄՍՈՑ 15ԻՆ ԵՒ ՅՕԻՆ

Խմբագիր—ՏՆՕՐԷՆ
ՀԱՅԱԿԱՅ Ե. ԷԿԻՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն երկրի համար
Տարեկան Մէկ տողար

Ո՛ր է Ժրար կամ գրութիւն
Հաղորդէ հետեւալ հասցէին

TO THE **AZADOUTIUN**,
438 Pearl St.
New York City, U. S. A.

Azadoutiun
LIBERTY.

Published Twice a month
By
Azadoutiun Publishing Company
438 PEARL St.,
NEW YORK CITY.

H. EGUINIAN,
Editor.

SUBSCRIPTION PRICE, free of postage, \$1.00 a year.

Entered at the New York Post Office as
second class mail matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒԼԻՍ 30, 1892

ԽՕՍԲԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Ի՞ր մը կամ ո՛ր է տեսակ
ապրանք մը աժան գնով ծախու
առնել կամ արտադրել ու վայն
բարձր գնով ալուր ծախելն վա-
ճառականութեան սկզբունքն է։
Վաճառականական ամեն տուն
հիմնեալ է այս պարզ ճշմարտու-
թեան վրայ՝ նպատակ ունենալով
գրամ շահիլ, հարստանալու հա-
մար։

Հայ ազգըն մասնաւոր ձիրք
և ընդունակութիւն ունեցած
լինելով այս գործին՝ վաճառակա-
նութեան մէջ նշանաւոր հանդի-
սացած է անյիշատակ ժամանակ-
ներէ ի վեր, և այսօր հանելուկ
մը չէ թէ հայ վաճառականն
պատուաւոր անուն ունի Սինկա-
բուրէն մինչեւ Նիւ Եօքը, Չինաս-
տանէ, Պարսկաստանէ, և մի-
ով բանիւ ծայրագոյն արեւել-
քէն մինչեւ ծայրագոյն արեւմու-
տս. և այս բաւական է ապացու-
ցանելու համար թէ հայն բնա-
կան յարմարութիւն ունի վաճա-
ռականութիւնն՝ բառին ընդար-
ձակագոյն նշանակութեամբ՝ լաւ
ըմբռնելու համար։ Ի հարկէ
մարդիկ դրամագլուխի մը պէտք
ունին ընդհանրապէս այս ասպա-
րէզին մէջ մտնելու համար։ Եւ
կը թուի թէ մեզմէ շատեր չու-
նենալով ոչինչ իւր դրամագլուխ
գործածելու՝ խօսքն ընտրած են
իւր շահու աղբիւր, և այսու ի
հարկէ խօսքի վաճառականութիւն
ծնունդ առած ու ընդհանրացած
է մեր մէջ՝ ջանալով լինիլ մին
այն յոռի սովորութեանց զորս
մեր թըշնամիք հայութեան ազ-
գային յատկութիւններն եղած
լինիլ կը կարծեն։

Ինչ է սակայն խօսքի վաճա-
ռականութիւնն։
Եթէ այս նիւթ իւր ամենա-
ընդարձակ վիճակին մէջ ձեռք

առնունք՝ խօսքի վաճառականու-
թեան փայլուն և օգտակար կող-
մերն ալ պիտի ստիպուինք ցոյց
տալ։ Օրինակի համար լրաց ըն-
կերութիւններն, որք ոչ այլ ինչ
կը վաճառեն, բայց խօսք կամ
լուր միայն. և այս միութեանց
կարգէն կրնան սեպուիլ նաեւ լը-
րագիրներն որք լուր կը վաճա-
ռեն հասարակութեան կամ օգ-
տակար խօսքեր։ Սակայն տար-
բերութիւնն այս կարգին և անոնց
մէջ որոց վրայ գրել է մեր նպա-
տակն՝ սա է թէ առաջինք կը վը-
ճարեն լուրին կամ խօսքին հա-
մար և զայն կը վաճառեն ալ-
ուր իրենց անձնակամ շահուն և
երբեմն յօգուտ հասարակութեան
միայն։ Իսկ վերջինք կը վաճառեն
ինչ որ կրնան արտադրել, հոգ
չէ եթէ հացին տեղ քար կամ ձը-
կան տեղ օձ վաճառած լինին մի-
ամիտ ժողովուրդեան։

Այլ սակայն ճշմարտութիւնն
խոստովանելու համար հարկ է
յաւելուլ թէ ուրիշ ազգաց մէջ
չ'կան կամ շատ քիչեր են որք
լուրն կամ խօսքն գնելով իրենց
անձնական քսակէն ժողովուրդին
կը հաղորդեն՝ այս վերջնոյ օգ-
տոյն համար միայն, մինչ մեր
ազգին մէջ շատեր եղած են որք
քաղած են այս գնահատելի ընթա-
ցից մէջ՝ իրենց քսակին փնտը
ակներեւ ունենալով։ Եթէ այս
մասին օրինակներ մէջ բերելու
ենեմք, ոչ միայն չեղած կը լի-
նինք մեր նիւթէն, այլ պարտա-
ւորած պիտի լինինք մեր թէ հին
և թէ ժամանակակից պատմու-
թեան մէկ մասն աստ արձանագ-
րել ի դոճացումն ընթերցող հա-
սարակութեան։

Սակայն մեր նպատակն լինե-
լենով գրել խօսքի վաճառակա-
նութեան այն մասին վրայ որ հո-
մանին չէ վերը յիշուածներուն,
բացառելով թէ ո՞րն է, և ինչ
է խօսքի վաճառականն որ ոչ մի-
այն անպատուութիւն մ'է մեր ա-
նուան այլ, և ցեց մ'ու որք մը ա-
պականիչ մեր ազգային վարդե-
նիին արմատին վրայ, և որոյ շունչ
ու ներկայողութիւնն կը փտտեցնէ
զմեզ ճիշդ այնպէս որպէս ֆիլոզ-
սերան որթատուներն կ'ապականի
զայն փտտութեան մասնելով։

Այն մարդը որ նիւթապէս
կամ բարոյապէս օգտուելու հա-
մար՝ միայն խօսք կը վաճառէ
գիտնալով միանգամայն իր քարո-
ղածի սխալ ու փնտաւար լինիլն,
խօսքի վաճառական մէ։ Այն որ
օր մը բան մը կը քարոզէ և իր
քարոզին համար կը պահանջէ
վճարում, և ուրիշ օր մ'ալ նոյ-
նին հակառակ բան մը կը քարո-
զէ և ատոր համար ալ կ'ակնկալէ
վճարում, խօսքի վաճառականու-
թեան ամենավատտ ներկայացու-
ցիչն է։ Բայց եթէ կայ աւելի
ցաւալի բան մը, այդ մեր ժողո-
վրդի պարզամտութիւնն է որ հա-
ւատ կընծայէ այսպիսեաց ու կը
քաջալերէ զանոնք առանց թա-
փանցելու անոնց թափանցիկ գի-
մակին և գաղտնեաց. և աւելի
մեծ յանցանքն հասարակութեան
սա է թէ երբ քարոզ մը լաւ ևս
է ըսել խօսք մը փայլուն կեր-
պիւ կը նկարագրուի՝ ուրբուն
բառերով և դարձաբառերով
զարդարուած՝ անոր կը փարի ա-
ռանց սակայն իմաստն ու թոյնն
ստանալու այդ փայլուն դեղաշա-
տին զոր սիրով կուլ կուտայ յան-
դէտս։

Միամիտ մէկը խօսքի վաստ
վաճառականն ճանաչելու լաւա-

գոյն միջոց մը կրնայ գտնել եթէ
ուշադրութիւն ընէ սա ճըմար-
տութեան թէ այս կարգի մար-
դիկ ընդհանրապէս իրենց ապ-
րանքն կը ներկայացունեն հասա-
րակութեան փայլուն և պիւր
բառերով դարձարեալ և դիւրա-
մատչելի զնով, ճիշդ այն հրեայ
մանրավաճառին նման որ իւր
խարդախեալ մատանին կը ջանայ
վաճառել իւր ոսկի պատուական։
Այսպիսի իժի ծնունդներն
օրէ օր պիտի բազմանան, եթէ
ժողովուրդն զանոնք ի բաց չի
վանէ իր մէջէն։

ՀԱՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Մեր առաջին երեսին վրայ հը-
րատարակած եմք այսօր Հայկա-
կան Միութեան վերջի նստին ըն-
դարձակ նկարագիրն, ցոյց տալու
համար Հայ ժողովուրդեան ընդհան-
րապէս, ամերիկեան գաղթակա-
նութեան մասնաւորապէս թէ ինչ
պարագաներու տակ Տքթ. Կապ-
րիէլ Ղիւրք բռնած էր այդ Միու-
թեան մէջ, և թէ ժողովուրդն ո՞ր
աստիճանի զայրացած է այդ անա-
պան զէնքի դէմ որ բացի մի կամ
երկու պարոններէ, զրկուած է իւր
բոլոր բարեկամներէ՝ իր յոռի բնա-
ւորութեանց և ազգափնտա ընթա-
ցից համար։ Մենք ի հարկէ այս-
չափ չ'պիտի դադարեցնէինք մեր ըն-
թերցողներն այս մարդու և Հայ-
կական Միութեան կռիւներու
խնդրով, եթէ մեր հեռաւոր ազ-
գայինք ևս ԳԱՋ գիտնային թէ
սա անձ ոչ թէ Հայրենասէր մ'է
հոս, այլ քար գայթակղութեան
ամէն դասու և կարգի անձանց
ու ընկերութեանց մէջ։ Իսկ իւր
Հայքն խնդրի առկա շէնքար խնալ-
նա համեստ երեսնալու համար կը-
ռիւներու վրայ բան չի գրեր, այլ
այլ կռիւներուն պատճառ կը լինի.
իրեն դէմ եղած ծանր ամբաս-
տանութեանց պատասխան չը
տար՝ հեռաւոր ազգայնոց հա-
մակրանքն շահելու համար, բայց
այդ ամբաստանութեանց դէմ
դատ բանալ կենէ, այդ ալ Հայ-
կական Միութեան մէջ, կարծե-
լով թէ հոն իր յանցանքներն պի-
տի կրնային անտեսանելի մնալ։
Սա քաջի մը պէս չի կրնար կուլ
հրապարակի վրայ, երբ հարկը պա-
հանջէ կուտիլ, այլ իւր յանցանք-
ներն պահելու սին յոյսով վատու-
թեամբ խայթել կուզէ այն կարի-
ճին նման որ կ'ապերաներու տա-
կէն կը քալէ։ Բայց ժամանակը ե-
կած է ջանջախելու այդ փնտաւար
կենդանին՝ առանց թողլու որ կա-
պերտի տակէն երկրորդ անգամ
դուրս հանէ իւր կիճն. և յոյս մեծ
ունինք որ այսուհետեւ մէկէ աւե-
լի առիթ չի պիտի ունենանք մեր
ընթերցողներն զբաղեցնելու այդ
մարդու խնդրով, զի քաջ համոզ-
ուած ենք թէ քիչ օրէն նա կ'ար-
տաքսուի այն ընկերութեանն որն
իրեն միակ պաշտպանն կը կար-
ծէր երկրագնդին վրայ։

Գրագէտն—Ինչ կը խորհիս
իմ նոր հրատարակած տետրակիս
մասին։
Բարեկամս—Ո՞ր տետրակն ը-
սել կուզէք։
Գրագէտն—Վերջի հրատարա-
կածս որ կը կրէ «Ինչպէս քնա-
նալու է» անունն։
Բարեկամս—Այդ նիւթին վը-
րայ զըրուած ամենէ յարմար
տետրակն էր այդ։ Դեռ կէսն
կարդացած չէի անցեալ օր երբ
խորունկ քնոյ մէջ թաթախեցայ։

Հայաստանեայց Ուղղափառ
Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն կը
ծանուցանէ թէ Արժ. Յովսէփ
Ծ. Վարդապետ յառաջիկայ Օ-
գոստոսի 7ին քաղաքս պիտի գտ-
նուի և Ս. Պատարագ պիտի մա-
տուցանէ Ս. Ոսկերեքանի մատ-
րան մէջ։ Այն ամեն ազգայինք
որք կ'ապասխին Նորին Արժանա-
պատուութեան գալստեանն իրենց
զաւակներն մկրտել տալու հա-
մար, կը հրաւիրուին պատրաստ
լինիլ նոյն օրու ան համար։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՈՐ ԸՆՏՐԵԱԼՔ
ԵՒ

ԹՈՒՐԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Հընադին Լ'Առմէնիի վերջին
թուոյն մէջ կը կարդանք թէ՛ կա-
ռավարութիւնն կը ջանայ ազգե-
ցութիւն բանեցնել Ռուսիոյ կայ-
սեր վրայ որպէս զի իրիմեանի ըն-
տրութիւնն չը վաւերացուի, զի
կըր Հայրիկի նման Եկեղեցական
մը վանէն Պոլիս, Պոլսէն ալ յե-
րուսաղէմ աքաղաղէր. կը տես-
նէ թէ թքածն պիտի լիզէ։

Միւս կողմանէ Նուրեան Է-
ֆէնտին գաղտնի պաշտօն է ըս-
տանձնած, որպէս զի համոզէ զիւր-
միրեան Սրբազանն որ հրաժարի
կաթողիկոսական ընտրելութենէն
և որոյ փոխարէն Սուլթանն կ'ա-
պահովէր իրեն տալ Պոլսոյ Պա-
տրարքականաթոռն։ Այսպէս կուզ
ուր բեկանել յեջմիածին կատար-
ուած ընտրութիւնն, որ ազգային
ազատական ոգւոյն պարզ ար-
տայայտութիւնն է։

Մարդ շատ տղայամիտ լինե-
լու է ջանալ համոզել մէկը որ՝ ի-
բր եկեղեցական արժանացած է
հասնիլ բարձրագոյն պաշտօնին և
գահուն գորս Հայ ազգն կարէ նը-
ուիրել իւր արժանաւոր դատած
եկեղեցականին և անոր տեղ ա-
ռաջարկել երկրորդական պաշ-
տօն մը, որպէս է Պոլսոյ Պատրի-
արքութիւնը։

Միևնոյն թերթին մէջ կը կար-
դանք նաև թէ՛ Արմէն Լուսինեան
անուն Ձէնիլիէրցի խայտառակ
վարժապետը, Նազըմ Պէյի կող-
մանէ գացած է յերուսաղէմ, որ-
պէս զի յաջողի իրիմեանի հետ
մտերմական յարաբերութիւններ
հաստատել և հաղորդել ինչ որ լսէ
առ Նազիմ. Տաճկական առած մը
կայ որ կ'ըսէ «անտառն մէջ տա-
պար է ինկեր, կոթն ալ մեր կող-
մանէ»։ Եթէ օրհնեալ ձեռքեր այս-
պիսի վատեր ստեղծեն հայրե-
նասիրական մեծ գործ կատարած
կ'ըլլան։

Ինչ որ ալ լինի, Ազգը իւր
այս վերջին կաթողիկոսական ըն-
տրութեամբ ցոյց տուաւ համայն
աշխարհի թէ՛ իւր տրամադրու-
թիւնը ազատամտական են։
Աթէնք. Թուրք կառավա-
րութեան ներկայացուցչին խնդրեց
Յուդաստանի կառավարութեան
որ արտաքսուին հայ ազատասն-
եալք ի Յուդաստան, որք կ'ամ-
բաստանուին իւր թէ մաս ունե-
ցած են Ռուսուսքի գործին մէջ։
Աստորից և Ռուսիոյ ներկայացու-
ցիչք ոյժ տուին Թուրք կառավա-
րութեան պահանջին։
(Լ'Առմէնի)

Քարոզիչն—Արդարութիւնն կը
սիրէք։

Անհատ—Այո՛, եթէ իմ մա-
սիս ըսուած չի լինի։

ՎԱՐԴԱՊԵՏՆ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ՄԵՁ

Հայաստանեայց Ուղղափառ
Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն կը
ծանուցանէ թէ Արժ. Յովսէփ
Ծ. Վարդապետ յառաջիկայ Օ-
գոստոսի 7ին քաղաքս պիտի գտ-
նուի և Ս. Պատարագ պիտի մա-
տուցանէ Ս. Ոսկերեքանի մատ-
րան մէջ։ Այն ամեն ազգայինք
որք կ'ապասխին Նորին Արժանա-
պատուութեան գալստեանն իրենց
զաւակներն մկրտել տալու հա-
մար, կը հրաւիրուին պատրաստ
լինիլ նոյն օրու ան համար։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՈՒՂԱՓԱՌ
ԵԿԵՂԵՑԻՆ

Ի Հայրիկի Գերմաներէն լեզ-
ուաւ նոր գիրք մ'է հրատարակ-
ուած, «Պատմութիւն Հայաստան-
եայց եկեղեցւոյ և դիւր յարաբե-
րութիւնք Դրդ դարէ մինչ ժընդ
դարու Բիւզանդեան եկեղեցւոյ
հետ»։ Այս ընտիր գործ որ Տքթ.
Արշակ Տէր - Միքայէլեանի գրչէն
է Էլած, աշխատակցութեամբ ի-
ջնայի Համալսարանի Բրոֆէսոր
Նիքոլոս և Կէլէքի, նոր լոյս կը-
սիրուէ մեր եկեղեցւոյ պատմու-
թեան մութ կէտերու վրայ։

Բրոֆ. Չերազ, որոյ թերթին
մէջ կը կարդանք նաև զայս լուր,
մէկմէկ օրինակ նուիրած է այս հե-
ղինակութեանն առ Գանթէրպըրի
Արքեպիսկոպոսոյն, Պատ. Տքթ.
Վէյսին որ Բինկի Գօլէճի Տնօրէ-
նէն է և առ կ'աւտաթըն և ձէյմս
Պրայս, և այլոց. ի պատասխանի
կ'աւտաթըն Մայիս 30 թուով առ
գիրն յղած է առ Տ. Չերազ։

Միքիլ Տէր,
«Երկին յառաջարան իսկոյն
ընթերցայ և հակառակ այնքան
աշխատութեանց ընդ որս ծան-
րաբեռնեալ կը գտնուիմ, կը յու-
սամ թէ՛ ժամանակ պիտի գտնամ
ծայրէ ծայր կարգաւու այնքան
շահեկան մի երկասիրութիւն»։

Իսկ Պ. Զ. Պրայս, իւր գրոյն
մէջ ի մէջ այլոց սապէս կը գրէ.
«Իմացայ չափազանց ուրախու-
թեամբ ընտրութիւնն իրիմեան
Սրբազանի, որոյ աղնիւ և վեհ կեր-
պարանն և քաղցր դէմքն դեռ կը
յիշեմ, մինչ եկած էր յԱնկիւր։
Կը յուսամ թէ՛ Չարն պիտի վա-
երացնէ զիւր ընտրութիւն իւր
կաթողիկոս Ամենան Հայոց»։

ԱՅՑԵԼՈՒՐ ԻՆՆ ՄԸ Ի ՀԱՌՈՐԴՅ

Հավրդէ Իմբրովմէնդ ա-
նուն ընկերութիւնն, որոյ ծա-
նուցումը կայ լրագրոյս Գ երե-
սին վրայ, անցեալներն հրաւի-
րած էր լրագրոյս խմբագիրն յիշ-
եալ գիւղէ այցելել՝ տեղւոյն վրայ
իւր գաղափարը կազմելու հա-
մար։ Ամսոյս 12ին մեր խմբա-
գիրն ընկերակցութեամբ Գերման
լրագրապետի մը և յիշեալ ըն-
կերութեան ներկայացուցչին յիշ-
եալ գիւղը այցելեց և հոն ան-
ցուց մի քանի ժամեր։ Հաւորդէ
Հըտսըն գետի եզրը բարձրացող
բլրի մը վրայ կը գտնուի հինա-
ւուրց ծառերու հովանիին ներ-
քէն։ Գիւղին մէջ կան 20ի չափ
տուներ որք կը վերաբերին նշա-
նաւոր ամերիկացիներու։ Տեղւոյն
գիրքը բարձր լինելով և հողն
աւազուտ՝ առողջարար է օդն ու
զուարճալի միանգամայն։ Ծէրդի
յատուկ մօզիկներն իրենց բացա-
կայութեամբ կը փայլին հոս։
Ջուրը որ գետնէն կը բղխի, զով
է և մաքուր։

Ուէսդ Ծօր երկաթուղւոյ գի-
ծը կանցնի գիւղին մէջտեղէն ու
ունի իր յատուկ կայարանն. օրը
10էն աւելի կառավարներ կը կե-
նան Հաւորդէի առջև։ Ծախու
գետիններն իրենց աժան գներով
գիւրամատչելի են ամեն դասու։
Հեռաւորութիւնն 1½ մղոն
լինելով Նիւ Եօքէ, մէկը կարող
է իւր բնակարան հաստատել ի
Հաւորդէ և աշխատիլ քաղաքի
կամ չըբակայից մէջ։ Հաստա-
տուն կալուածք ունենալ փափա-
քող ազգայինք այս գիւղն կրնան
ընտրել՝ վստահ լինելով թէ անոր
հողերն ապագայ մ'ունին իրենց
առջև։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՈՒԹԵԱՆ
ՅՈՒՆԻՍ 16Ի ՆԻՍՏԸ

(Շարունակութիւն)

Թեան ձեռնարկուցաւ և ՏԵԹ. Արշակունի մէկի դեմ. ժողովոյ ամբողջ քուէովն Գործ. ժողովոյ կազմիչ Հոգաբարձեաց և յայնժամ քանի աւելի անդամք ներկայ էին. Այս քուէարկութեան միջոցին Աստուածատն իրրեւ խնդրոյ ներքեւ մի անձ, իւր աթոռը յանձնեց Տիար Այվազեանին որ իրրեւ ատենապետ քուէի դրաւ ՏԵԹ. Արշակունի իրր կազմիչ ընտրելութիւնն: Ժողովն ընտրեալ ընտրեց նորնոր կազմիչն զի վստահ էր թէ՛ Միութեան գործերն կը յանձնուէին աշխարհի անձի մը ձեռք որ ի վաղուց մեր ազգին մէջ անհատի մը ցանկութեան աւարակայ լինելու և հասնելու ամեն պաշտօններն վարած է ամենայն ուղղութեամբ և վստահ էր մանաւանդ. զի գիտէր թէ՛ նորնոր կազմիչներն ազգ. ընկերակազմ գործոց մէջ ունեցած երկար փորձառութենէն ի զատ, Միութեան խաղաղասիրական և յառաջդիմական նպատակին յարմարագոյն ածն էր:

Օրակարգն սպառած եւ Գարբիշեանի ալ կանխելին իւրը հասած լինելով նիստը փակուեցաւ ժամը 11 ու կէսին, յաջորդ նիստը յուլիսի 30ին տեղի ունենալու պայմանաւ որ այս շրջանի վերջին նիստն է, յետ որոյ պարագայ օրերն պիտի սկսին:

Լիայոյս ենք որ՝ ժողովն լաւ ընտրութիւններ պիտի կատարէ յաջորդ շրջանի համար և պիտի դադարին Հայկական Միութեան նստերէն տիրացու Գարբիշեանի խնդիրներն: Հայկական Միութեանը Հայ Գաղթականութեան ներկայացուցիչը ըլլալ կը փափաքի յԱմերիկայ և Հայ Գաղթականին շահեր մտածող ու պաշտպանող մարմին մը ըլլալ կը ջանայ, և եթէ չէ արդիւնաւորուած դիւրնապատակ, պատճառն ահա պայծառ կ'երեւի: Արեւադանձ ու ինքնահաւան մարդ ու մը երազած փառքերուն զոհած է Հայկական Միութիւնն, իւր կարեւոր ժամերն սպառելով:

Ա.

ՏԵԹ. ԿԵՊՐԻՆԻ ԿԵՐԹՈՒՄ

Հնդկաստանէն թղթակից մը կը գրէ մեզ թէ Հայք անտանելի թերթին խմբագրին՝ ՏԵԹ. Կէպրինէլ տեսնելով որ չի կրնար յաջողութիւն գտնել Ամերիկայի մեր Հայ գաղթականութեան մէջ, կը ջանայ Հնդկաստան երթալ «Հոն գործելու, լաւ ևս է ըսել տեղույն գաղթականութիւնն կ'ընելու համար»: Թղթակիցն կը յաւելու նաեւ թէ «ստոյգ աղբիւրներէ լսած եմ որ ինքն Հոն մի քանի անձերու գրած է որ աշխատին իւր Հոն փոխադրուելուն համար: Մասնաւորաբար խնդրած է փոխադրանակ ազգային Պարոն Յ. Իսկէնտէրէ որ այս կողմերս եկած է այժմ առեւտրական գործի համար»:

Տարակոյս չի կայ թէ Ամերիկեան Հայ գաղթականութիւնն ուրախ պիտի լինի այս եօթնազլխեան փորձանքին երթալն տեսնելով:

Կը մաղթենք որ Պ. Իսկէնտէր յայն անձն աշխատի իւր Հոն յաջողի ազգային գաղթականութիւնն այդ մարդն յանձնելու և տեսնելու դժբաղդութենէն:

ՄԱՀԱՐՈՅԺ

Փաթերունէ կը գրեն թէ ամսոյս 27ին իւր մահկանացուն կը քած է Տիկին Մ. Թովմասեան ի հասակի 22 ամաց թողլով անմխիթար ամուսին մը և որը մահուկ մը իւր կէս տարեկան: Հանգուցեալն երկու տարի առաջ Ամերիկայ եկած էր ու իւր մէկ ու կէս տարի առաջ ամուսնացած էր Տ. Թովմասեանի հետ ի Նիւ Եօրք:

Թաղման հանդէսն կը կատարուի այս օր՝ հաւանականաբար Արթ. Յ. Մ. Վ. Սարաճեանի ձեռամբ որ հրաւիրուած է կատարել այս տխուր պարտականութիւնն:

ԼՈՒՐՆԵՐ

—Ամսոյս 28ի երեկոյն Պ. Պետրոս Համալեան ամուսնացաւ Օր. Լուսարեւր Յ. Փաթերեանի հետ ի Պրուքլին, ուր պիտի հաստատեն իրենց սուսն նորապաշտակ ամուսինները:

—«Ինտէքս Թու տէր Բէրիօ» տիգրը օվ տէր ու օրըստ հանդիսին մէջ Ա. Սէրիդ մանրամասն տեղեկութիւններ տուած է Հայերէն հանդէսներու, Մուրճի, Արարատի, Արաքսի, Աղբիւրի, Արեւելեան Մամուլի, Բաղմամբէ-պի, Հանդէս Ամսօրեայի, Ծաղիկի և Բերանի վրայ:

—Տ. Հ. Մ. Քիրէշեան որ Լօրտէն Դէյլըր ընկերութեան հաշույն կ'. Պօլիս գնացած էր ապրանք գնելու, վերադարձաւ քաղաքս անցեալ շաբթու:

—Արթ. Յովսէփ Վ. Սարաճեան այժմ կը շրջադառնայ՝ այլ և այլ կողմեր գտնուող Հայ գաղթականներն այցելելով և հոգւորապէս մխիթարելով դանձը:

—Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտամունքներն լրանալէ վերջ անցեալ կիրակի օր թէ՛ քարոզ պիտի խօսէր ՏԵԹ. Այվազեան, իսկ ժամանակը կարճ լինելուն պատճառաւ յետաձգուեցաւ ուրիշ կիրակիէ մը:

—Վաղը, յուլիս 31ին պիտի խօսի Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Տ. Կիրիլլապի Կիրիլլեան: —Թանգարանի Միութեան տարեկան ժողովն տեղի չունեցաւ անցեալ կիրակի օր մեծամասնութիւն չի գոյացած լինելուն համար: Վաղը տեղի պիտի ունենայ նոյն տարեկան գումարումն ի թիւ 151 Տրդ ալքիլու:

—Հայկական Միութեան այս երեկոյեան ժողովին պիտի ատենախօսէ ՏԵԹ. Մ. Աթթարեան նիւթ ունենալով «Հասարակ մարդուն բռնաւորութիւնն»: Նոյն նիստի մէջ ընտրելիներ պիտի առնուան յաջորդ շրջանի պաշտօնէից համար:

—ՏԵԹ. Արշակունիի քարոզի գոր հրատարակեցինք մեր անցեալ թուով, տետրակի մը ձեռով հրատարակուած է շաբթուս մէջ բազմաց թախանձանօք:

—Պատ. Վահան Գ. Պէշկէօթիւրեան Օգոստոս 9ին պիտի ամուսնանայ Օր. Մարթա Տ. Վալիւի հետ յիւլիսեան, իւլիսեան, և պիտի հաստատուի ի Նիւպէրի, Միլիկան:

—Կը մերժեն ուրեմն այս աւրած տօլարն փոխել ինձ համար, Հարցուց յաճախորդն խառնութեան, և դեռ կը պնդես թէ քրիստոնեայ մ'ես դու:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

ՃԳՆԱԻՈՐ ԷՂՕ

(Շար. տե'ս թիւ 57)

Վա'յ գոչեց Մարտիրոս աղան, — այդ դո՛ւ ես, ճգնաւոր Եղօ, մտի'ր, մտի'ր, աչքիս վրայ եկար, այդ ի՞նչ է ձեռքիդ:

—Մի գտուէ, աղա՛, քեզ ընծայ եմ բերել:

—Շատ շնորհակալ եմ... դէ՛հ, գառը տար ծառային և ներս արի տեսնենք, անպատճառ մի փորի ցաւ կունենաս:

Ի հարկէ, մոռաց Եղօն չարութիւնը արձակելով, — գիւղացին մինչեւ փորի ցաւ չունենայ կըզա՞յ քեզ մօտ:

—Վա'յ, գոչեց նեղացած վաշխառուն, — ուրեմն ես վա՞ն մարդ եմ, որ ինձ մօտ միայն փորի ցաւի համար գան... հ'ը, վա՞ն մարդ եմ:

—Ինչո՞ւ ես հարցնում, Մարտիրոս աղա, — ասաց Եղօն, — դուն գիտես որ ես ճիշդ խօսող մարդ եմ:

Վաշխառուն գունաթափուեց, լռեց, սակայն և մոռաց շարունակելով մուրհակ գրել:

—Կեցի'ր, մոռաց անլսելի ձայնով, — հիմա քեզ ճամբարտախօս կը շինեմ...

Մուրհակը գրեց, ստորագրել տուեց, յետոյ փող տուեց գիւղացուն և դառնալով Եղօն՝

—Ճգնաւոր, ասաց, — ի՞նչ հրաման ունիս:

—Հրաման չունիմ, աղա, — խօսեց Եղօն, — այլ խնդիր... մեր գիւղի աւաղակը գիւղից հեռանալու համար փող է ուղում 500 ոսկի. ամեն մէկին 5 ոսկի է ընկել վճարելու...

—Գիտեմ այդ, ընդհատեց վաշխառուն նրա խօսքը, — է՛, ի՞նչ ինչ:

—Ձեմ ասում թէ՛ այդ քեզ ցաւ է պատճառում, ժպտեց դառնութեամբ Եղօն, — ոչ, ես եկել եմ, որ 5 ոսկի փող ուղեմ պարտք: Վաշխառուն բարձր քրքիլ արձակեց.

—Հա՛, հա՛, հա՛, գոչեց նա, — վատ մարդն էլ փող կունենայ... ես վատ մարդ եմ, եղբայր, աւելացրեց նա լրջութեամբ, — վատ մարդը փող չի ունենալ:

—Սխալ ես, աղա՛, ժպտեց Եղօն, մեր երկրի մէջ այժմ միայն աւաղակները փող ունեն:

—Ուրեմն ես աւաղակ եմ, բարկացաւ վաշխառուն, — հա՞, ես աւաղակ եմ... դէ՛հ, էլ ո՞ւր ես նստել, ելի'ր գնա աւաղակի մօտից, հայդէ՛... սորան նայէ՛ք, ճամբարտախօսն և խօսում ճգնաւորս, ինձ աւաղակ է ասում... ելի'ր նստի՛նք...

Այդ միջոցին սենեակը մտաւ քահանան, Եղօն գիւղական քահանան, որ մինչեւ մէջքը ծռուելով, մի ստորաքար ծիծաղ դէմքին, բարեկեց՝ տեղիցը անգամ չի շարժուող վաշխառունն և գնաց նստելու վերի անկիւնում վաշխառուից փողը ինչ հեռու:

—Բարե եկար, տէր հայր, դարձաւ նրան աղան, — տեսնո՞ւմ ես ձեր ճգնաւորին. ճամբարտախօս է, ինձ աւաղակ է ասում:

—Վա'յ, վա'յ, գոչեց քահանան Եղօնի դառնալով, — մեզայ ասա որդի... Մարտիրոս աղան աւաղակ... որի՞ն կողոպտեց. փառք Աստուծոյ, բոլորիս բարեբարութիւն է արել միշտ և անում

է... ջաշիլ է, աղա, — դարձաւ նա աղային — նշաշախուծիւն մի տալ խօսքերին, Եղօն վատ տղայ չէ, նա արդար տղայ է, նորէն քո հովանիդ պակաս մի անիլ վերայից:

—Հոգ չէ՛, ես կը ներեմ, խօսեց վաշխառուն, — և կըտամ քեզ, Եղօ, հինգ ոսկի մէկ տարի ժամանակով. հինգ ոսկիի համար էլ մէկ ոսկի տոկոս կառնեմ:

—Շատ շէ՞, աղա, հարցրեց Եղօն, — առաջին անգամ 4 ոսկիի համար միայն կէս ոսկի տոկոս առի'ր... սակայն հոգ չէ, գրի'ր մուրհակը:

—Դու կարծեմ Հայերէն կարգալ գիտես, այնպէս չէ՞:

—Գիտէ, գիտէ, մէջ մտաւ քահանան, —ինձնից լաւ գիտէ:

Եւ վաշխառուն առաւ գրիչն ու տաճկերէն գրեց մուրհակը, հոգեւրէն էլ «Իսթիլալ» ի* տակ առաւ, ստորագրել տուեց և հինգ հատ լիւրա տուեց Եղօն:

Յետոյ, շատ յետոյ, երբ արդէ 5 ոսկին 30 ոսկի էր դարձել, Եղօն իմացաւ, որ մուհրակի մէջ 10 ոսկի գէր բուած:

Եղօն միամտուեց, սակայն հոգին խիստ տրտում էր և երբէք աղօթք չէր դալիս միտքը:

Երբ դուրս էր գալիս տնից, քահանան նրա ետեւից հասաւ և միասին գնացին դէպի գիւղը խօսակցելով:

Այդ խօսակցութիւններից մի քանի խօսք էր միայն միտք պահել Եղօն երբ տուն մտաւ:

(*) Իսթիլալ մի պայման է, որով պարտատէրը գրաւում է պարտաւանի կայքը, եթէ վերջինս փողը չտայ ժամանակին. համաձայնութիւնից է կախուած իսթիլալ անելը:

—Ինչպէս վճարեմ այս փողերը, տէր հայր, հարցրել էր Եղօն քահանայից:

—Ո՛րդի, ասել էր քահանան, — երկիր վարելով դու հազիւ կարող ես վաշխառուից ընծան մասնակարարել, որովհետեւ, ամեն մի բերքիցդ եթէ ընծայ չըտանես նորան, այն ժամանակ աղան գանգատ կըտայ և կ'երթաւորանտի մէջ կ'ըլտես և կամ թէ՛ հողը ձեռքիցդ կ'երթայ:

—Ի՞նչպէս, գոչեց դարձաւ Եղօն, — իսկ մի տարի ժամանաւ կը...

—Այդպէս բան աղան սովորութիւն չ'ունի գրելու իւր մուրհակի մէջ:

Եղօն թակարթն էր ընկել. գլուխը ծռեց և մոռաց:

—Ապա ի՞նչ անեմ:

—Գնա կ'. Պօլիս. ասում են, այնտեղ աշխատանք կայ. աշխատիր և ուղարկիր, իսկ երբ բացակայ լինես, վաշխառուդ իրաւունք չ'ունի ձեռք դաշնելու հողիդ մինչեւ որ ետ դառնաս:

Կ. Պօլիս Պահճէ-կափու կոչուող Ասիական ափի նաւահանգստում փռուող թաղի մէջ՝ մաքսատունից ոչ շատ հեռու՝ գտնուում է Ջէֆէրէյ խան անունով հինգ յարկանի գեղեցիկ հիւրանոցը, որի ներքին յարկը կազմում են փառաւոր միտերանոցներ և խանութներ:

Ցերեկները այդ միտերանոցներից՝ մի կողմից՝ ելնում են ապրանքների մեծամեծ հակեր և միւս կողմից՝ մաքսատունից գալով՝ լընում են պակասած տեղը: Ամեն կողմից գալիս են մշակները, որոնք ուսերի վրայ առած ճոճող ամուր կը որ փայտը, անց են կացնում նրա վրայ հակը և չափաւոր ու կանոնաւոր քայլերով, ճոճեցնելով փայտը բեռի հետ՝ տանում են ապրանքներ այս ու այն կողմ: Շարունակելի

ՀԱՎԱՐԹԻ ԻՄՓՐՈՒՎՍԵՆԹ ԸՆԿ-

9 ՈՒՐԼՏ ՊԵՆՏԵՆԻ
HAWORTH IMPROVEMENT Co.

9 WORLD BUILDING

Ձեր ուղարկութիւնը կը հրաւիրենք Հաւորթի վրայ, որ ունի գեղեցիկ դիրք մը, Ուէսթ Եօրեկաթուղւոյն գծին վրայ, Նիւ Եօրքէ 14 մղոն հեռաւորութեամբ, Եօնքըսի դիմացը: Ե՛նք շինելու համար խոշոր կտոր հողեր 25 ոտք լայնութեամբ և 150 ոտք երկայնութեամբ, կամ 3750 քառակուսի ոտք տարածութեամբ, պիտի ձախուրին իւրաքանչիւր քառակուսի ոտքը 3 անկան և կանան սէնթի և կամ կտորը 112 ու կէս և 150 տօլարի (դիրքին համեմատ):

Այս հողերը կրնան վաճառուիլ ամսական վճարով, նախ՝ 10 տօլար կանխիկ և յետոյ ամիսը 5 տօլար տալով:

Մեր առաջին 50 յաճախորդներուն հետեւալ շնորհումներն կ'լինին Ա. — Վճարելի դրամին համար տոկոս չառնուիր:

Բ. — Ամեն անոց որը կանխիկ կը վճարեն և 1893 Յունիս 1էն առաջ առն կը շինեն, հողին գնոյն մէկ երրորդը պիտի զեղուի:

Գ. — Տուն շինողներուն ձրի աւազ պիտի տրուի:

Հողերը տեսնելու համար Հաւորթէ երթալ ուղղութեամբ շտաբի բիւ տոմսակներ կրնան ստանալ դիմելով առ:

Պ. Բ. Վարդուկեանց ի թիւ 332 իտ 21րդ փողոց, ԱՁԱ. ՏՈՒԹԻՆԻ իմբադրատունն և Հաւորթի Իմրու վէճիթ Ընկերութեան, ի թիւ 9 Ուօրլո Պիլլինի, Նիւ Եօրք: Հետեւեալ անձինքը կը յանձնարարենք իւր մեզի համար վկայողներ:

Պ. Ուիլիամ Հուայդ, հողային տնօրէն Միւշուէլ Լայֆ Ինչուրէնս Ընկերութեան, յանկին Նասօ և Միտըր փողոցաց, Պ. Հէնրի Գօլէշնը, գանձապահ Րիվըրսայտ դրամատան, յանկին 57րդ փողոցի և Տրէ Էվընիլի, Պ. Գիէորդ Ա. Մինասեան, ի թիւ 145 սնաս փողոց և Պատ. Բօպէրտ Ս. Մաք-Արթըր, քարոզիչ 57րդ փողոցի Գիէլքըրի Պափիլիսէ ժողովարարին, որ կը վկայէ հետեւեալ կերպով: «Ինձ մեծ հաճոյք կուտայ ըսել թէ Հաւորթէ երկրոյս այցելւէն յետոյ, դիրքը կը նկատեմ իւր աննպասակալին որ կը ճանչնամ Նիւ Եօրքի շրջակայից մէջ, որ մեծ առաւելութիւն ունի: Գիտեմ կորացեալ է, «Ի բնէ գեղեցիկ», և դիւրութեամբ կրնայ բարձր աստիճանի մշակուիլ: «Ողբ մաքուր և ներշնչող է, ջուրը մաքուր և աղէկ»: Նիւ Եօրք քաղաքին դրացնութեան մէջ գտնուած շատ մը տեղերէ շատ աւելի ազատ է առարկելի երեւոյթներէ: Նաեւ անտուններու, դաշտերու, առուակներու և աղբեր հաճելի զանազանութիւն ունի: Հին ջաղացքը զուրկ չէ իրական հրապոյրէ և պատմական արժէքէ: Մէկ խօսքով պէտք է ըսեմ որ տեղը խիստ պայծառ ապագայ մը ունի»:

ՀՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԹԻՒՆԻ
ՀՈՐ
ԵՐԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ

Այս երգարանն որ իւր տեսա-
կին մէջ մինչ ցարդ տպուածներէ
թէ՛ գերազանցն և թէ՛ ամէնաբն-
դարական պիտի լինի, մաքուր
թղթի վրայ ընտիր տպագրու-
թեամբ:

ԲԱՐՈՋ
ՏԲԹ-Յ- ԱՐՁԱԿՈՒՆԻԻ
Թէ ՈՅՔ ԵՆ ՊԱՅՄԱՆԵՐՆ ՈՒ
ՀԱՆԴԱՄԱՆԻ ԶԱՅՍ ԹՅՈՒՆԱԶ-
ԽԱՐԶՍ ԱՆՎԹԱՐ ՊԱՆԵԼՈՒ
ԵՆ ՀԱՅ ՄՆԱԼՈՒ:
(ԱԶՍՈՒԹԻՒՆԷ արտատպուած)

Այս տետր որ իւր համառոտու-
թեան մէջ շատ կարեւոր խնդիր
կը լուսաբանէ, արժանի է ամէն
Հայու խորին ուշադրութեան:
Կը վաճառուի խմբագրութեանս
քով հասը հինգ սէնթի:

ՄԱՐԶԱՐԱՆ
Գրեց
Գ. ԳԱՊԱՐԵԱՆ
Այս գրքոյի որ առաջինն է
Հայոց մէջ, գիտութեան կրթու-
թեան կուսուցանէ, և կարեւոր է
ամէն Հայ մարդու համար:
Գին 50 Սէնթ
Կը վաճառուի խմբագրութեանս
քով:

ԲԱՆԱԼԻ ԱՆԳՂԻԵՐԷՆ ԼԵՂՈՒԻ
Նիւ Եօրք — Տպար. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Գրեց
ԱՐԱՐԱՏԵԱՆ
Գին 55 սէնթ
Անգղիերէն ուսանիլ փափա-
քողաց համար խիստ ընտիր և յար-
մար մատենիկ մ'է սա, զիւրա-
հասկանալի ոճով:
Գին 50 փափաքողաց պարտին
գիմել խմբագրութեանս կամ հե-
ղինակին հետեւեալ հասցէի:

A. AYVADIAN
49 Columbus Ave. N.Y.

ՆՄՈՅՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԹԻՒՆԻ
Մ. Փորթուգալեանի գրած
Հայրենասիրական ոտանավորներէ
մի քանիսն ամփոփուած են այս
տետրակի մէջ իւրեւ նմոյշներ զա-
նազան քաղաքներէ մէջ և զանա-
զան տպագրութիւններէ տակ
իւր երեւմն գրած ոտանավորնե-
րին որոնք ժամանակին հրատա-
րակուած չը լինելով կորսուած
են այժմ: Այն մի քանի ոտանա-
ւորներ որոնք իւրեւ նմոյշ ամ-
փոփուած են այս տետրակի մէջ:
Գին ու ցան կը գտնուին Կ. Պօլիս
տպագրութեանս քով և իւրաքանչեւ
ներքին մէջ որոց վերստին տպա-
գրութիւնն վաղուց արդէն ար-
գիլուած է և «Արիւս» և «Արմենիա»
լրագիրներէն մէջ: Նմոյշներէ մէջ
փոքրիկ տպագրութիւններ տըր-
ուած են նաև թէ՛ այդ ոտանա-
ւոր ինչ տպագրութիւններէ տակ
ներքին մէջ գրուած են:

Գինն է 15 սանթիմ:

ՀԱՅՐԻԿԻ ՊԱՏԿԵՐԸ
Հ. Հ. Մ. Նիւ Եօրքի Օթեակը
չինեւ տուած է ՀԱՅՐԻԿԻ փառա-
ւոր պատկերներն ընտիր քարտի
վերայ մաքուր տպագրութեամբ:
Կը վաճառուի խմբագրութեանս
քով հասը 10 Սէնթի:

Ա. Չ. Գ.
Ի նպատակ Հայ երիտասարդաց
Թանգարանի Միութեան կը ծախ-
ւին խմբագրութեանս քով:



Բաժնի վերի պատկերին
խոշորագիրը, տասնութ և քսան
մատնաչափ երկայն և ութ մատ-
նաչափ լայն: Գին 10 սէնթ:

Ս. Ա. ՍԱՄՈՐԵԱՆ
145 Մէյսոն փողոց,
Նիւ Եօրք
Պատիւ ունի ծանուցանել ար-
գոյ Հայ հասարակութեան թէ
գործակալն լինելով չորեքշաբթի
հոգեւորական ընկերութեան մը,
զիւրութիւն ունի ամէն կարգի
տոմսակներ վաճառել Եւրոպայի
ամէն քաղաքներու համար և թէ
փոխադարձաբար:
Գիններն խիստ զիւրաւարտելի
են: Փափաքողաց պարտին գիմել
հետեւեալ հասցէին:

S. A. SAMOORE,
145 Madison st, New York.

Վ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ
Ուսթըր, Մաս.
Կը հրաւիրէ իւր հայրենակից-
ներն հանդերձներ կամ զըն-
կառի գնելու համար նախ գիմել
Bay State clothing Co.
ընկերութեան վաճառատունն ի
թիւ 46 և 48 Յըրքըթ Բլուքիթ,
ուր ինքն ամէն Շաբաթ երեկոյն
ներկայ լինելով մասնաւոր հոգ կը
տանի Հայ յաճախորդաց:

ՃԱՄԱՆԱԿԸ ԴՐԱՄ Է
ԻՍԿ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ
ՄՏԱՏԱՆԶՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ
Կ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ԵՆ ԸՆԿ.
53 CEDAR ST. N. Y.

Կիւլպենկեան տունն որ հանրածանօթ է ամէն տեղ, վաճա-
ռականական ճիւղ մ'ալ Նիւ Եօրքի մէջ հաստատուած լինելով՝ փոխա-
նակադրեր և և կուտայ Եւրոպայի գլխաւոր խի թուրքիայի ամէն քա-
ղաքաց համար: Ամերիկեան Հայ գաղթականք որք փոխանակադրեր
գնելու համար միշտ գոյարարութեան քաղաք ու ժամանակի կո-
րուտ ունեցած են տեղական դրամատանց գիմելով, այսուհետեւ
զիւրութեամբ և առանց ու և է կորուստի պիտի կարողանան այս վա-
ճառականական տան փոխանակադրերն ձեռք ձգել անձամբ կամ
նամակաւ գիմելով Տ. Կ. Կիւլպենկեանի վերոյիշեալ հասցէով:
Նիւ Եօրքէ դուրս բնակող անձինք զժողովրդեան չի բաղ-
խելու համար կրնան իրենց յղել զբաժնի քաղաքի գրամա-
տուն գնել և անկէ չէք մը առնելով յոյժ յիշեալ հասցէին, ուրկէ
պիտի ընդունին անոր փոխարէն ինքզնուր ինքնակազմի վերա-
դարձ թղթատարով:
Աւելի մանրամասնութեան համար գիմել հետեւեալ հասցէին
GULLABI GULBENKIAN & Co.,
53 Cedar St. New York City,

Open day and night
Eguinian
Binding &
Mailing Co.
438 Pearl Street,
NEW YORK.
Open day and night
ԾԱՆՈՒՑՈՒՄ
Այն ամէն Հայերն որք կը փա-
փաքին դրամ զրկել իրենց բարե-
կամաց ի թուրքիա կամ ի Յունաս-
տան, Չէք Պանք դրամատան փո-
խանակադրերն պիտի գտնեն ա-
մենաապահով, ամենաազատ և և
լաւագոյն:
MATHEWS & CO.,
BANKERS.
No. 2 Wall St. New York

Scott Printing
Company,
PRINTERS,
JOHN SCOTT,
Manager.
PRESS ROOMS:
220 William St., NEW YORK.
Presses Running Day & Night.

ՏԲԹ. Զ. Բ. ԹԷՆՏՈՐԵԱՆ
41 Oliver St. N. Y.
Հիւանդ կընդունի յիշեալ տե-
ղըն ամէն օր կէս օրէ վերջ ժամը
2էն մինչեւ 5. Իսկ ուրիշ ժամերու
մէջ Տէօքթէօրն տեսնելու համար
առանձին կարգադրութիւն կը լի-
նի:

ՏԲԹ. Յ. ԹՕԹՐԱՀԱՆԵԱՆ
ԱՍՄԱՆԱԲՈՅԺ ԵՆ ԱՍՄԱՆԱԳՈՐԾ
306 Արեւմուտք 125րդ փողոց
Յաճախորդներն կը գոհացնէ
արուեստի ամէն ճիւղերուն մէջ
գոհացուցիչ պայմաններով:
Ripans Tabules: one gives relief

ԷԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
438 ՓԵՐԼ ՓՈՂՈՅ
Այս տպարանն որ իւր տեսա-
կին մէջ անդրանիկն է ի Միաց-
եալ Նահանգս, այժմ աւելի ըն-
դարձաւորուած ու ճոխացած է նոր
տառերով ու տպագրական պէտ-
քերով, անանկ որ կարելի է գո-
հացուցիչ ու չափաւոր գնով տը-
պագրել Գրքեր, Լրագիր, Տետ-
րեր, Այցեւորմանք, Պաշարաններ,
Փոխանակադրեր, և ինչ և ինչ:
Նմանապէս այս տպարանն զիւ-
րութիւն ունի տպագրել Անգլիե-
րէն մանր տետրակներ և ամէն տե-
սակ փոքր գործեր, ինչպէս են,
Այցեւորմանք, Պաշարան, Անգլո-
գիր, և ինչ և ինչ:
Տպագրութեան մաքրութիւնն
ապահովուել է: ԷԿԻՆԵԱՆ տպա-
րանն տեղական տպագրչներու
մէջ զիւրք մը բռնելու համար, ո-
րոշած է մասնաւոր հոգ տանիլ
այս մասին առանց նկատի առնե-
լու շահու որքանութիւնն:

ԱՐՄԷՆԻԱ
ԱԶՍԱԿԱՆ ԿԻՍՏՈՒԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱԿԱՆ,
ԵՆ. ԵՆ.

Տարեկան լաճանորդագիրն է
չորս տողար. Հասցէն,
Redaction du journal
"Armenia",
Marseille, France

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐՈՒՄ
ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ
Կը ՀՐԱՏԱՐԱՆԻ ԱՅԺՄ
ՏԱՄՆ ԵՆ ՀԻՆԴ ՕՐԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ

Տարեկան լաճանորդագիրն, մէկ
տողար մ'է միայն,
ԿԱՄ ԵՐԵՐ ԵՐԸ ՄԷԿ ՍԷՆԹ.

Ամէն մէկ թուի մէջ
Խմբագրական յօդուածներ, թըղ-
թակցութիւններ, զուարճալիք և
այլ կարեւոր յօդուածներ:

ԷԿԻՆԵԱՆ ԿԱԶՄԱՏՈՒՆ
438 ՓԵՐԼ ՓՈՂՈՅ
ԷԿԻՆԵԱՆ կազմատունն որ ա-
մեն ընդարձակն է Հայ կազմա-
տուններու մէջ, և որ կը մրձի տե-
ղական շատ մը կազմարար ընկե-
րութեանց հետ, իւր շոգեւործ
մեքենայից ու վարպետ կազմա-
րարաց շնորհիւ կարողացած է ա-
նուն ունենալ Հրապարակի վրայ
և շահիլ պատուարեր համբաւ:
Այս կազմատունն իւր նոր և
ընդարձակ գործատան մէջ նորա-
նոր կարգադրութիւններ բրած է
աւելի ընդարձակ հիման մը վրայ
գործ ընելու համար: Հոս կը կազ-
մուկ գրքեր և տետրեր ամէն
քանակութեամբ. կը ծալուին
թերթեր ու հանդէսներ և ինչ և ինչ.
Կարճ ժամանակի մէջ,
Գինները չափաւոր են, ամէն
տեսակ կազմի համար: Միանգամ
փորձուի՛ր ինչ կազմատունն մը չի
գիմել բնաւ: Մի մոռնա՛ք մեր
այժմեան նոր հասցէն որ է
438 Pearl St. N. Y.

ԿՍԿԻՆԵԱՆ
Գրեց
Հ. ԷԿԻՆԵԱՆ
Հեղինակին ընտիր մէկ բա-
նաստեղծութիւնն է այս արձակ
գրութեամբ, որ կը վաճառուի խըմ-
բագրութեանս քով հասը 5 Սէն-
թի սխալն:

ՀԱՆԴԵՍՆԱԿԱՆ ԱՄՍՈՐԵԱՅ
ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄԱԿԱՆ,
ԱՐՈՒՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ
Ե. Տարի 1891
Տարեկան լաճանորդագիրն է
10 Յր. (4 Բուրլի). Հասցէն,
Redaction de la Revue "Hantess",
Vienne, (Autriche).
VII Mechitaristengasse, 4.

ԲԱԶՄԱՎԷՐ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՆ ԳԻՏԱԿԱՆ
Ամսամեքն
ԽԹ. Տարի 1891
Տարեկան լաճանորդագիրն է
տասը Փր. (4 Բուրլի). Հասցէն,
Redaction de la revue "Basmavep",
Venise, Italie, St.

ԱՐԱՀԱՄ ՍԱՀԱՊԻ ԵՆ ԸՆԿ.
ԱՐԵՆԵԼԵԱՆ ԶԱՏԱՐԱՆ
Թիւ 48 Կրիտուիշ փողոց
Արեւելեան ամենաընտիր կե-
րակուր, զիւրաւարտելի գնով, և
ամէն ինչ մաքուր բառեր կառա-
րուած են նաև թէ՛ այդ ոտանա-
ւոր ինչ տպագրութիւններէ տակ
ներքին մէջ գրուած են:

REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation,
Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad
Complexion, Dysentery, Offensive Breath, and all
disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitu-
tion. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief. Sold by
druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.,
10 Spruce Street, New York City.

